

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ»,
Կամ Tiflis, Rédaction «Mschak»,
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է միկն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խաւաքանչիւր տողականը 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Վարդուհի Յովհաննիսեան Բարխուդարեանց, Նունէ Յովհաննիսեան Նարիմա-
նեանց, Թամար Յովհաննիսեան Գալանթարեանց եւ Նիկողայոս Չաքարեան Նարիմա-
նեանց ցաւօք արտի յայտնելով առաջիններն իրանց անստանալի եղբոր եւ չորրորդն
իր աներորդու:

ՅՈՎԱՍԷՓ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՍԱՅԻՓԵԱՆՅԻ

Վարժաւոր մանր, որ տեղի ունեցաւ ամսիս 2-ին, ուրբաթ օրը, խնդրում են ներկայ
լինել յուղարկատրութեան, որ լինելու է ամսիս 8-ին, երեքշաբթի, ժամը 10-ին, սե-
փական տնից (Մուխրանեան փողոց, № 28) գէպի ս. Աւետեանց (Ջգրաչէնի) եկեղեցին:
Ամբիջը կը կատարվի երկուշաբթի, երեկոյեան ժամը 8-ին:

ԲՈՎԱՆԵՐԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին Տեսչութիւն. Կիրակնօրեայ զրոյց.
Մատենագրութիւն. Ներքին լուրեր.—ԱՐՏԱ-
փին Տեսչութիւն. Նամակ Յրանստայից. Ար-
տաքին լուրեր.—ԽԱՌԻ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար.
—Հեռագրութիւն.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՆԵՐՔԻՆ, ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻՆՈՐԵԱՅ ԶՐՈՅՑ

Անցեալ կիրակի, «Մշակի» մէջ պ. Չախու-
չեան փառաւոր ապակի տուեց մեր ազգային
պարծենկոտութեան: Չարմանալի մի փաստ
էր նա բերել, բայց ինչու զարմանալի. ասեմք
ուղղակի—ապշնչող փաստ: Տօնվում էր Գա-
մառ-Քաթիկոսի յօրեկանը, եւ հայ ազգը իր
միակ մեծ, ազգային բանաստեղծին ինչ նուէր
մատուցեց:—Թիւրք լուրեր...

Միայն յիշու լուրեր:
Նոյն օրը, երբ լուր տեսաւ պ. Չախուչեանի
յօդուածը, Թիֆլիսում կատարվում էր մի յո-
րեկան, որ ցոյց էր տալիս, թէ յիշու լուրեր
ընծայ ստանալու համար մեզանում պէտք է
լինել Գամառ-Քաթիկոսի. իսկ այդ գումարից
աւելի մեծ գումար ստանալու համար պէտք է
լինել զբաղան ունեւորութեան:

Հայը շատ է ապշնչել իր անպէտք գործե-
րով: Այս մի փաստը զգալիս է քառասունհինգ
այդ ապշնչող ապաւորութիւնը:

Այն, յիշում ենք: 1886 թւականն էր: Հայոց
մատուցած անհայտ եռանդով քարոզում էր տօ-
նել «Մայր Արաքսի»-ի հեղինակի յօրեկանը,
եւ ասելու ոչ թէ ուղերձներով, զատարկ հիւ-
ցական բացազանութիւններով, հետադիւրսով
եւ բաժանելով, այլ կենդանի զօրով:

Գործ, համակրութիւն, յարգանք, երախ-
տագրութեան չօղակիչ նշան էր հարկաւոր
Բանաստեղծը նեղ զրուցեան մէջ էր. հարե-
ութիւն երբեք չէր ունեցել, ապրում էր իր
բնտանիքի հետ իր ստանալու չնչին ունեւորով:
Պէտք էր օգնել նրան, որ առօրեայ մանր,
կենտական հոգեբեր չը տանջէր նրան, պէտք
էր թեթեւացնել նրա վրա ընկած ծանր բեռը,
կրկնապէս պէտք էր յարգել ծերութեան ա-
լիքներով զարդարված Գամառ-Քաթիկոսին,
այն բանաստեղծին, որ յուզել է մեր արտերը,
ուրարութեան եւ վշտի արտաստեղծներ է հա-
նել մեր աչքերից:

Այսպէս էին գրում մեր լրագրները: Ինչքան
պ. Չախուչեան, ուստեղէն լեզուով հրատա-
րակած իր բրոյիւրում բացազանչում էր. «Հայ,
հայ շատ տուէք փոխանակ դափնեայ պսակ-
ներէն»:

Եւ տուին... յիշու լուրեր:
Բայց ինչի նշան էր այդ ազգային ընծան:
Մեր մամուլի, իր, պ. Չախուչեանի, ինչպէս
նաեւ մեծ բանաստեղծի կատարեալ միամտու-
թեան նշան:

Ոչ ոք նրանցից չը գիտէր, թէ ինչպէս կա-
րելի է հայերի մէջ յօրեկաններ տարածել եւ
խոշոր ընծաներ տառաւ: Ոչ ոք նրանցից չէր
ճանաչում հայերին:

Նախ եւ առաջ յօրեկանի գաղափարը, իզուր
են կարծում, թէ հայերի մէջ յօրեկանի արժա-
նանալու համար պէտք է լինել կամ մեծ բա-
նաստեղծ կամ մեծ հրապարակախօս: Ասեմք
ուրիշ, քիչ-կուշուրական չը լինենք: Ել է

այսպէս: Դուք, անշուշտ, յիշում էք Շչեդրինի
«СОНЪ ВЪ ЛѢТНЮЮ НОЧЬ» պատմութիւնը: Թի-
շում էք, զեպարտամեմտական կողմերի
կառավարչի յօրեկանն էր տօնվում: Միգա-
նում չը կան այդպիսի «վաստակաւոր գործիչ»-
ներ: Բայց զրա փոխարէն մեզանում շատ ու
շատ են փոքրիկ միջակութիւններ, որոնք մի
առանձին հոգատարութեամբ հաշուում են, թէ
քանի օր, քանի շաբաթ կամ ամիս են անց
կացել այս ինչ կամ այն ինչ ազգային պաշ-
տօնում: Եւ երբ այդ ամենօրեայ հաշիւները
գալիս ցոյց են տալիս մի յայտնի չըլման, օրի-
նակ 10 տարի, 15 տարի, 20 տարի, 25 տարի,
նրանք արտաարտի դիմում են «ուր անկն է»
եւ պատմում են իրանց արածները:

Պատարատ է ամեն ինչ: Սուս ու փուս գործ
է սկսվում:

Մի մեծ քաղաք: Նոր վերջացաւ մի ակցիո-
ներական ընկերութեան ընդհանուր ժողովը:
Բաժնետէրերը ամենաքանչեւի արտադրու-
թեան մէջ են: Գործերը հիմնադր կերպով են
գնում, 30% աշխատանք են ստանում: Բարե-
գործութիւն անկողն րօպէներ են: Տուել են
աղքատին, տուել են սովածին, չեն մոռացել
զարոյցը, վանքը, հոգեւորականին:

Ահա այդ հանդիսաւոր, սքանչելի րօպէն-
երի մէկը ներս է մտնում, ձեռքը տանում է
զրպանը, կամացուկ հանում է մի թուղթ:
Սկսվում է լուսնոյ: Ինչ է պատահել: Մի-
մեանց ակնաչիւն տուում են, եւ տեսակ տեսակ
արամադրութիւններ են երեւում գալիս դէմքե-
րի վրա: Ո՛րը անհոգ է, ասես լսելու չէ դնում,
նրը դժգոհութիւն է յայտնում, հէնց այնպէս,
իր քէֆին բաւարարութիւն տալու համար, ու-
րը համաձայն է, նրը չէ համաձայն: Փոքրիկ
վէճ է բացվում:

—Ո՛ր է, ինչ է, ինչպիսի է, ասում է մէկը
խիստ դառն արամարանքով:

—Լաւ, ինչ որ է. մի բան տուէք. ուզում
են, եղբայր, ինչ անենք: Ուզողի մէկ երեսն է
սեւ, չը տուողի երկուսը:

Սկսվում է սակակրութիւն: Եւ վերջը ստո-
րագրութեան թերթի վրա մի թիւ է նշանակ-
վում:

Երկրորդ տեսարան:

Մեծ, փառաւոր հիւրանոց, կենտրոնական
քաղաքի առաջնակարգ փողոցի վրա: Գիտեն,
որ այնտեղ հարուստները եւ միայն խոշոր հա-
րուստներն են իջնում: Եւ անա վիթխարի չի-
նութեան առաջ, պատերի տակով, յետ ու ա-
ռաջ է գնում ազգային մեծապատիւ մուրաց-
կանը: Երեւ էլ նա այստեղ էր, անցել օրը.
չարախնդրով նա գալիս էր, մտնում նախասե-
նակը, ուր սեւ տախտակի վրա գրված են
հիւրանոցում իջածների ազգանունները: Այդ
ցուցակի մէջ նա հայ անուններ է որոնում:

Իսկ նրանք քիչ են այդ անունները:

Ահա նա գտաւ մէկը: Թեւ թաւ գրքեր
դրած՝ բարձրանում է վերեւ, ծառայի միջոցով
այցեատն է ուղարկում եւ ինքը սպասում է:
Շատ չէ պատահում, որ նա իսկոյն ներս հրա-
ւիրվի. շատ անգամ են նրան ճանապարհ դը-
նում, առանց նուիրական դռների բացվելու
արժանացնելու: Բայց լինում են եւ բացառու-
թիւններ. նա մտնում է, դուռը փակում: Չը
գնանք ներս, ընթերցող. ինչ է կատարվում
այնտեղ, ինչ են խօսում եւ ասում—այդ մեզ
չառ լաւ յայտնի է. կարգանք Պարոնեանի:

«Մեծապատիւ Մուրացկանները», այնտեղ շատ
չեն չափազանցութիւնները. պատկերը միան-
գամայն ճիշդ է...

Նայենք այս երրորդ տեսարանին էլ:

Փողոցի դրան մօտ կանգնեց փառաւոր
կառքը: Դուրս եկաւ մի շատ մեծ պարոն: Մի
հարցնէ թէ ով է նա: Շատ եւ շատ յայտնի
մի անձնաւորութիւն. փողով, դիրքով, կապե-
րով շատ հզոր մի մարդ է: Ներկայ րօպէին
այդ պարոնը միայն «Նովանաւոր» է: Այցելու-
թիւն է տալիս մի հարուստի: Բայց ինչի հա-
մար:

Մի քիչ լսենք երկուսին:

—Տնւր, ասում է այցելուն վերին սառի-
ճանի ֆամիլիար ձեւով:

Բայց տանտէրը դեռ դիմադրում է:

—Միշտ չը տա՛ւ այստեղից չեմ հեռանալ,
վճակաւ, լուրջ կերպով պատնում է այցելուն:
Տանտէրը հօ չէ տոււ, թէ ոչինչ չէ տալիս:
Այդպիսի յանդգնութիւն նա չէր էլ կարող ու-
նենալ մեծ պարոնի մօտ: Տալը տալիս է, բայց
ուզում է ջշով ազատել իր օձիքը: Հարկ է,
պէտք է ասաւ, արա դէմ խօսք չունի խեղճ տա-
նտէրը: Բայց արա...

—Ինձ էլ ինչպիսի, այս ինչ այս-ինչի, ու-
ղորմելի կերպով, աշխատելով դուրս եւ կարեկ-
ցութիւն շարժել այցելուի մէջ՝ ասում է տան-
տէրը:—Ինչու ես այդպէս ինձ պատմում: Տու-
գանք է, ասում եմ, եւ ես տալիս եմ. բայց
քիչ առ...

—Ձե, տուր իմ ուզածը. եկել եմ իմ ոտով,
ամօթ է որ գնամ այստեղից մի չնչին բանով:
Եւ այն այս կարգով: Սեղանատան մէջ պա-
տի ժամացույցը արդէն կէս ժամից աւել է ցոյց
տալիս՝ ինչ սկսվել է այդ խօսակցութիւնը:

Ուզողը ուզում է, ասողի հոգին է դուրս գա-
լիս: Անցնում են էլի րօպէներ, այցելու-հո-
վանաւորը նշան էլ չէ անում թէ պիտի դուրս
գնայ, հեռանայ: Մի ինչ որ յուսահատութիւն
սկսում է ճնշել տանտէրով կողերը: Եւ նա,
որտեւ քար օղջմելով, մի սգաւոր անձնաւոր-
ութեամբ համաձայնվում է վերջապէս տալ,
բայց դարձեալ ոչ ըստը, այլ կէտը:

—Կէտով վերջացնենք, հալալ ու հարաւ կի-
սենք, ասում է նա:

Հովանաւորն էլ հօ մարդ է: Նա էլ ձանձրա-
ցել է, նա էլ զգում է որ աւելին քերթել ան-
հաւերն է:

Համաձայնութիւն է կայանում: Այցելուն իր
կտորի փափով քարձերի վրա է ընկնում, իսկ
տանտէրը գոհութեամբ խաչ է հանում երեսի
վրա:

Կան շատ ուրիշ տեսարաններ էլ: Բայց մենք
վերջակէտ դնենք:

Ահա միջոցը: Այսպէս մեզանում տօնվում են
հինգամեակի, տասնամեակի, տասներեքա-
մեակի յօրեկաններ: Եւ ինչ կամենաք, կարող
էք պատճառ բերել.—գրական գործունէու-
թիւն, մանկավարժութիւն, ազգային երէցփո-
խութիւն, քահանայութիւն, ամեն ինչ, ամեն
ինչ:

Հասկացողութիւնները խիստ աղճատվում են
մեզանում: Մի ժամանակ հասարակական գոր-
ծիչի, մեծ գործերի զազաղների համար ամե-
նամեծ զարդը պատկերն էին: Իսկ հիմա, իւ-
րաքանչիւր օր դուք տեսնում էք դիակառքեր,
քեռնաւորված պատկերով: Եւ ակամայ ասում
էք ձեզ. ինչքան շատ են մեզանում մեծ մար-
դիկ:

Այսպէս են եւ յօրեկանները: Նրանք այն-
քան յաճախ են պատահում, որ միամիտ մարդը
կարող է չըմել եւ հաւատալ մի րօպէ, թէ մե-
զանում տաղանդների խիստ առատ հունձ է...

Պատահւմ է թէ դիակառքներ, թէ յօրեկան-
ները այլ եւս այն չեն արտայայտում, ինչ դուք
սովոր էք կարծելու: Ամեն ինչ է ժամացել, ջրի
գին է դարձել մեզանում: Եւ ամեն միջակու-
թիւն, տմեն հոտաբակ մահկանացու կարող է
երեւակայել, որ իր «մեծութեան» նշանը ան-
պատճառ կարտայայտվի կամ յօրեկանով կամ
դիակառքով:

Ո՛րը գնան իսկական տաղանդները: Ինչ ա-

նեն Գամառ-Քաթիկոսները:

Նրանք միամիտ են եւ միամիտ էլ կը մնան:
Կարծում էին մեր լրագրները, թէ բաւական
է ասել, որ Գամառ-Քաթիկոսի յօրեկանն է,
եւ ամեն ինչ հասկանալի կը լինի: Նա անհուն
երախտիք ունի ազգի վրա. Հնդկաստանից
մինչեւ Կաթիֆօրնիս նրա ստեղծած երգերն են
երգում: Բաւական է ասել, թէ բանաստեղծը
կարօտ է հանգստութեան, թէ նա հազիւ է
կարողանում ապրել իր ծառայութեան փոխա-
րէն ստացած ոսկով: Ասացե՛ք այդքանը, եւ
բաւական է. կիմանան թէ ինչ պէտք է անել:
Ինչ իմացան.—Թիւրք լուրի ընծայ մի
մարդու, որ երեսուն եւ հինգ տարի զարդա-
րել էր հայկական բանաստեղծութիւնը:

Ո՛չ, բաւական չէր այդքանը: Հարկաւոր էր
հովանաւորներ գտնել, գնալ ու դռները ծեծել,
ոտը դնել հայի կոկորդին, քաշել-դուրս գջլել
նրանց մի բան:

Եւ այդպէս միամիտ են մնում միայն իսկա-
կան երախտաւորները, իսկական տաղանդները:
Իսկ ճարպիկ տափաւորութիւնները.—Նրանք
խորին բաւականութեամբ չփում են իրանց
ձեռքերը. նրանք իմպել են գործ տեսնելու
եղանակը. եւ գոհ են, շատ գոհ...

Իր յօրեկաններն «մեծ» ընծայից միայն բա-
նաստեղծը մի աւելորդ տխուր ճամբարութիւն
իմացաւ: Հայերի կեանքից եւ զրեց հեռեւեալ
«Երկաթուղ»:

Մարդայի ազգ էք, հայեր, դուք, աւանդ:

Ձեր յօրեկանն է մուրացկի թաքաթ:

Միամիտ բանաստեղծ: Նոր միայն էր նա ի-
մանում որ այդպէս է...

Լ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի

Մարտի Գորկի. «Մի անգամ աշխարհ...» թարգմ. Ս.
Շահումյան. 18 էր. գ. 7 կոպ. Թիֆլիս 1901 թ.

«Կուշաք սովածին մանր կը բրդի», ասում է
ժողովրդական առածը:

Այդ առածի ճշմարտութիւնն է ապացուցա-
նում իր մանրակերպութեամբ Մարտի Գորկին,
որ, անձամբ աղքատութիւն քաշած լինելով,
իր կաշուի վրա դգացել է, թէ հրքան դժուար
է աղքատ ու սոված մարդուն զանցառու չը
լինել կուշտերի յօրեկան պատմութիւնների
դէմ:

Մի անգործ մնացած պանդուխտ մի քաղ-
ցած կնոջ հետ «մի անգամ աշխարհ» կտորում
են մի խանութի կողպէք. հաց դողանալու
համար: Պողպատը հացը նրանք բաժանում են
եղբայրաբար եւ գիշերային ցրտից պատապար-
վելու համար զրկում են միմեանց ու այդպէս
պաղկում տաքութիւն քիչ կորցնելու համար:

Պանդուխտը, որ այդ ժամանակ «պղնձա-
լուրջ կերպով դողալով» էր մարդկութեան ա-
պագայի խնդրով, որ «երազում էր սօցիալ-
ական բարենորոգումների, քաղաքական մեծ-
մեծ յեղափոխութիւնների մասին», այնպիսի
զրուցեան մէջ էր ընկել, որ նրան «իր մարմ-
նով տաքացնում էր մի պատիւը ծախած ինչ,
մի անբաղդ, ջարդված ու տորոված էակ, որը
ոչ տեղ ունի կեանքում, ոչ գին»:

Պանդուխտը խանդաղատվում է իր դուռ-
թեան վրա, յուզվում է այդ «ընկած» կնոջ
ցոյց տուած կարեկցութիւնից, եւ Նաւալայն
(այդպէս է այդ կնոջ անունը) միթաքում է
նրան, խոտաւալով միւս օրը մի տեղ, մի
գործ գտնել նրա համար: «Այդ առաջին կնոջ
համբոյրներն էին,—պատմում է պանդուխտը,—
որ մատուցանում էր ինձ կեանքը, եւ պէտք
է աւելացնել, այդ ամենալաւ համբոյրներն էին
իմ կեանքում, որովհետեւ բոլոր մնացածները
ոչինչ չէին տալիս իմ հոգուն, չը նայած, որ
չառ ու շատ աւելի թանկ էին նստում ինձ...»:

Պանդուխտը, որ այդ օրից յետոյ այլ եւս չէ
տեսնում խեղճ Նաւալայնի, վերջացնում է
պատմութիւնը հեռեւեալ արտասուչ խօսքե-
րով. «Եթէ նա հետեւ է արդէն,—որ շատ լաւ
կը լինէր նրա համար,—թող հանգչին հանգիստ
նրա ոսկորները. իսկ եթէ դեռ կենդանի է,

խաղաղութիւն նրա տանջվող հոգուն, եւ թող
երբեք նրա մէջ չարթնանայ իր անկման գի-
տակցութիւնը... որովհետեւ այդ կը լինէր նրա
համար մի նոր, անսպասելի անպատու (ապար-
դիւն) տանջանք...»

Մանրագիրը, չը նայելով գործող անձնա-
ւորութիւններ յարաբերութեան փոքր ինչ
տարբերակները, գործող տպաւորութիւն
է գործում եւ մի տեսակ կարեկից համակրու-
թիւն է ազդում դէպի «ստորացածները եւ
զրկվածները», որոնց դատը պաշտպանութեան
են նուիրված ուս գեղարուեստական գրակա-
նութեան լուսազոյն երկերը:

Թարգմանութիւնը վառ է: Սրբագրութիւնը
կարելի էր աւելի խնամքով կատարել:

II

„Армянские цыганы“. Г. Ванцианъ. 26 стр. Тифлисъ
1901 г.

Գ. Գ. Վանցեանի հետազոտութիւնը, որ ար-
տագրված է «Сборникъ материаловъ для опи-
сания мѣстностей и племенъ Кавказа» հրա-
տարակութեան XXIX-րդ գրքով, հետա-
քէրքից ցեղագրական տեղեկութիւններ է պա-
րունակում «հայ-բոջաների» մասին:

Հայ-բոջաները զբաղւած են մի մասն են կող-
մում, բայց, ենթարկված լինելով հայերի ազ-
դեցութեան, տարբերվում են իրանց ցեղակից-
ներէից:

Ցեղաների Թափառական, Թաղունի պէս ա-
զատ ցեղը գրաւել է շատ գիտականների եւ
մասնաւոր բանաստեղծների ուշադրութիւնը,
եւ չէ կարելի չուրախանալ, որ հայ ուսումնա-
սիրողներն էլ իրանց լուսման են մասնում այդ
ինքնատիպ եւ վերին աստիճանի հետաքրքրա-
կան ցեղին նուիրված գրականութեան մէջ:

Տ. Յ.

Նոր ստացված հրատարակութիւններ. 1) Դոկտ. Կ.
Յ. Փաշայեան. «Մարդկութեան ամենամեծ թշնամին»,
հրատ. Պարսկաստանի հակապաշտական ընկերութեան,
71 Երև. ձիւ. Երվր. 1901 թ. 2) «Համառոտ պատմու-
թիւն հայոց եկեղեցու. (պատմական միջնակարգ դր-
ւոյնների հայ առանձնների համար). կաղմ, Ն. Ք. Լա-
մազեանց. 72 Եր. Գ. 30 Կ. Յիփիս 1901 թ. 3) М. Я.
Алавердянцъ. «Кочина А. С. Грибоѣдова по ар-
мянскимъ источникамъ». 26 стр. С. Петербургъ
1901 г. 4) К. Хатисовъ. Нѣскольکو словъ по поводу
статей Г. Т. «Подлежатъ ли измѣненію результаты
торговъ». 16 стр. Баку 1901 г. 5) Сборникъ техни-
ческихъ статей. Изданіе Экспедиціи заготовленія
государственныхъ бумагъ. 1901 г. № 1. С. Петер-
бургъ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆԸ

Կառավարիչ անտար, ընկելով բժ. Վարդապե-
տեանի բողոքը դատաստանական պարտի վճռի
դէմ, որով նա յանցաւոր էր ճանաչված իր կնոջը
տանջելու եւ ինքնասպանութեան հասցնելու
մէջ, Թողեց այդ բողոքը առանց հետեւան-
քի: Ինչպէս յայտնի է, դատաստանական պա-
րտի վճռով բժ. Վարդապետեան դատապարտ-
ված է երկու ամսով ընտարկութեան եւ ե-
կեղեցական ապաշխարանքի:

Պետերբուրգի Կայսերական հրապարակական
գրադարանի 1897 թ. համար հրատարակած
հաշից երեւում է, որ ուսուց 277 պարբե-
րական հրատարակութիւններից գրադարանում
ամենից շատ պահանջում էին «Русская Мысль»
ամսագիրը, այն է 4877 անգամ. ապա գալիս
են «Вѣстникъ Европы», «Миръ Божій»,
«Русское Богатство», «Сѣверн. Вѣстникъ»,
«Новое Слово», «Историческій Вѣстникъ»,
«Наблюдатель» եւ «Недѣля». 187 լեզուե-
րով հրատարակված թերթերից ամենից շատ
պահանջում էին հայերէն «Մշակ» լրագիրը եւ
լեհական «Ateneum». ամենից քիչ պահանջող-
ներ ունէր «Neue Jahrbücher für Philologie und
Pädagogik»:

Թիֆլիսում վերջին ժամանակ ուտելիքի պա-
շարեղեններից մի քանիսի գները չափազանց
թանկացել են: Այս առիթով ուրբաթ, նոյեմ-
բերի 2-ին, Թիֆլիսի քաղաքագլխի պ. պաշ-
տօնակատարը առեւտրական-անտեսական գոր-
ծակաւորների ուղեկցութեամբ նայեց Սոյդատսկի
Բաղարում գետոված ուտելիքների խանութ-
ները: Պարզվեց, որ առեւտրականները արհես-
տական կերպով բարձրացրել են գները. ձուի
հարկերը, օրինակ, նրանց վաճառում են 3
րուբլով, մինչդեռ ձու բերվում է այժմ քա-
ղաք նոյն քանակութեամբ՝ օրքան եւ առաջ:
Ուտելիքների հարկադրութեամբ նոյեմ-
բերի 2-ին սկսած ձուի հարկերի գինը նշա-
նակված է 1 րուբլի 80 կոպէկ, օրից աւելի
առեւտրականները իրաւունք չունեն պահանջ-
վելու գնողներից: Բացի արանից քաղաքագլխի

պ. պաշտօնակատարը հարց է բարձրացրել
քաղաքի կողմից միջոցներ ձեռք առնելու մա-
սին՝ անհրաժեշտ ուտելիքներից մի քանիսի
գները էժանացնելու համար:

Ներուշարթի, նոյեմբերի 5-ին, տեղի է ու-
նենալու դերասան պ. Պետրոսեանի բենեֆիսը:
պարտնը ընտրել է Շէքսպիրի «Արքայ Լիրը»:
Ուշադրութիւն ենք դարձնում այն հանգա-
մանքի վրա, որ մի քանի օր առաջ լրացաւ
պ. Պետրոսեանի բենեֆիսը գործունէութեան
քառամեակը: Նա առաջին անգամ բեմ գոր-
ելու է 1881 թ. Օդէսի «Անյուսաւի» քայլի տուն
(«Madame Caverlet»), 1881-ի հոկտեմբերի
29-ին: Պ. Պետրոսեանը այդ ժամանակ կրում
էր Օրգուրթեան ծածկանունը եւ խաղում
էր Բայոնդի դերը:

«Новое Время» լրագրի պատկերազարդ յա-
ւելումը մէջ ապված է Պետերբուրգի Գորո-
շայ անուանված կղզու վրա նոր կառուցան-
վող հայոց աղքատանոցի գեղեցիկ նկարը: Պե-
տերբուրգի լրագրի խոսքով, այդ տունը միակ
կը լինի Պետերբուրգում իր դուռ հայկական
ոճով, Հայաստանի նախկին մայրաքաղաքի
Անիի տները օրինակով: Այդ շինութեան նա-
խագիծը առաջին պարզեւն ասացաւ կոնկրե-
տու. Շինութեան նախագիծը կազմել է ճար-
տարագետութեան ակադէմիկոս Ա. Մ. Կո-
չետով:

Հինգալթի, նոյեմբերի 1-ին, տեղի ունեցաւ
Թիֆլիսի քաղաքային ուղարկւայի եւ առան-
ձին մասնագործի միացած ժողովը՝ հրդեհա-
չէշների խմբի եւ քաղաքային այլ հաստատու-
թիւնների համար Կոնսուլական փողոցում
նոր տուն շինելու հարցի մասին: Ժողովը, ի
նկատ տնկելով, որ հրդեհաչէշների խմբի այժ-
մեան ընտանիքները քաղաքում է արդէն մինչ-
այն աստիճան, որ ապուստում է փուլ դալ,
մի եւ նոյն ժամանակ անհնար է վարձով բը-
նակարան գտնել նրա համար քաղաքի կենտ-
րոնական տեղերում: որոշեց քանդել Կոնսուլ-
ական փողոցում գտնվող քաղաքային տունը
եւ նրա տեղ շինել նորը՝ ծախսելով նրա շի-
նութեան վրա 138,000 րուբլի:

«Рус. Вѣд.» լրագրին հաղորդում են Պե-
տերբուրգից, թէ պրոֆէսոր Մարաշեւս, վե-
րադառնալով դէպի Ամերիկա կատարած ճա-
նապարհորդութիւնից, իր սովորական դասա-
խօսութեան փոխարէն համարադրում է ծա-
նոթարեց ունկնդիրներին իր այն տպաւորու-
թիւնների հետ, որ ստացել է Ամերիկայում: Ի
միջի այլոց պրոֆէսորը պատմեց իր ծանօթու-
թեան մասին ամերիկական նոր նախագի-
ծողվելու հետ, երեւաց, որ նախագիծը Ռու-
սաստանի վրեժ կողմնակից է եւ ծանօթ ուսուց
գրականութեան նշանակութիւնը պարագլուխների
Գոգոլի, Տուրգենիւի եւ Տոլստոյի հետ: Այժմ
խիստ հետաքրքրվում է Գոգոլի հեղինակու-
թիւններով:

«Новое Время» լրագրի ասելով, Պետեր-
բուրգի քաղաքային ինքնավարութիւնը հիմ-
նական ռեֆորմների ենթարկելու հարցի վերա-
բերմամբ կազմված խորհրդակցութիւններին
մասնակցելու համար հրաւիրվում են, ի միջի
այլոց, բարձր Կորֆ, Պետերբուրգի նախկին
քաղաքագլուխ Լիխաչով եւ «Вѣстникъ Евро-
пы» ամսագրի խմբագիր Մ. Սաափոյի:

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻԺ մեզ գրում են. «Հոկ-
տեմբերի 24-ին քաղաքագլուխ Միքայի Պալա-
պանեանը աստիճան անգամ նախագում էր
դուռնի ժողովին իր ընտրութիւնից յետոյ
Նիստը բացվելուց առաջ՝ ձայնաւոր Գր. Չա-
րիւնով նրա արժանաւորութիւնները եւ խնդրե-
լով անձնական թշնամիների ջանքերին ուշա-
գրութիւն չը դարձնել Նիստը ակվաւորեց
դահլիճում էր եւ ներկայ եղող ժողովուրդը
երկար ծափահարեց ճառագոսին: Պ. Պալապա-
նեանը յաղված պատասխանեց, որ նա պատ-
րաստ է ծառայել ժողովրդի չանքին: Նոյն ժո-
ղովում որոշվեց եկող 1902 թ. աշնանին էլ ասլ
Ռափայել Պալապանեանի այրին 600 րուբլի:

ՂՈՐԱՍԻԺ մեզ գրում են. «Այսօր, հոկտեմ-
բերի 30-ին, Ղուրայի քաղաքային վարչու-
թեան մէջ տեղեկութիւն է ստացվել, որ քաղա-
քագլխի պաշտօնում ընտրված պ. Սերգէյ-բէկ-
Աղանեան եւ նրա օգնական պ. Ա. Պոպովին
Բաղուի նախագահութեւն չէ հաստատել իրանց
այդ պաշտօնների մէջ»:

ԱՆԻԱՔԱՆԻՍԻԺ մեզ գրում են. «Երէկ, հոկ-
տեմբերի 29-ին, այսօր մի դժբաղդութիւն
պատահեց: Մի նորարար «աղա» փայտի թա-
գութեան պատճառով՝ ուղում է իր աղիւսի
գործարանի մօտ գտնվող արանք քանդել, որ
հին փայտերը ձեռք առնէ. բայց աղաութիւնը
այնքան կուրացնում է «աղալին», որ նա խնա-
յելով մի քանի կօպէկ՝ չէ ուղում կտուրի հողը
քանդել տալ, որովհետեւ ծախս չատ կը գնար,
այլ իր մօտ աշխատող մշեցի գաղթական հայի
եւ մի օտա զինուորի հետ ուղում է ուղղակի
օրէնքը տեղահան անել, որ շինութիւնը միան-
գամից փլուի, որ ասլա փայտերը ջակեն: Եւ
նա չէ օրալվում իր ենթադրութեան մէջ,
արանք փլուում է, ասլայն գերանները եւ հողի
տակ է մնում թշուառ գաղթականը եւ մեռ-
նում... Ո՞րտեղ չէ մեռնում, սպանվում ինքն
մշեցին... «Աղան» համեմատաբար թեթեւ է
պրծնում, միայն մի ոտքն է ջարդվում: Զին-
ուորի ոտքերը նայնպէս վնասվում են: «Աղալին»
ի հարկէ, իսկոյն կառքով բերում են տուն,
ապա այժ են մօրթում, մօրթում մէջ փաթա-
թում. յետոյ երեք բոխիներն են մէկը քուսի
կտուրից արարչաւ գալիս, այնցում... Մի քանի
կօպէկ խնայող «աղան» հիմա այլ եւս ոչինչ
չէր խնայում իր պատուական անձի համար...
Իսկ օրվայ պարէնը մի կերպ հայթաթող թըշ-
ւառ մշեցի գաղթականի վտարված, աշխուղա-
ված եւ սառած դիակը բերում եւ յանձնում
են ցորից նոյնպէս սառած, փէտացած այրուն
եւ որբերին... Ո՞վ է պատասխանատուն. ո՞վ
պէտք է ամօքէ, միթէրէ հանգուցեալից յե-
տոյ մնացած յղի այրուն եւ որբերին. ո՞վ պէտք
է նրանց թշուառ գոյութիւնը պահպանէ, որ
սովամահ չը լինեն... Նրանց բողոքը երկինք է
հասնում, բայց յայտնող ամենքը խուլ են. առ-
կայի լաղանա՝ չը պէտք է խուլ մնալ, իրա-
ւունք չունի խուլ մնալու: Հաթիբբեյիների
անունն է դուրս եկել. արանք լնջով են պա-
կաս:

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻԺ մեզ գրում են. «Վախ-
ճանկից բոխի Մ. Արախմեան, որ վեհանձն
երեսաստար էր եւ անձնուէր՝ աղքատների շա-
հերին» Բաղաքը որոշեց իր հաշուով թաղել
նրան:

ՂՈՐԱՍԻԺ մեզ գրում են. «Անցեալ օրը
Թաղար-Օրս գիւղում ձերբակալվեց դարձեալ
մի աւազակ՝ Միղդա-Կուլին»:

ԱՆԻԱՔԱՆԻՍԻԺ մեզ գրում են. «Այս տարի
մեր գաւառից զինուոր նշանակեցին 214 երի-
տասարդի, որոնցից 14 հոգի քաղաքից են, իսկ
մնացածը գիւղերից»:

ՄԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՅՐԱՆՍԻՍԻԺ

Պարիզ, հոկտեմբերի 27-ին
Մինչդեռ Պարիզի հայերը տնում էին, մի
կողմից, «Ժամանակը» թիւի տակ, հիւրանոց-
ների անտանիքից ցուցակում հայ անունն որո-
նող «խմբագրի մը» մեկնումը, յուսալով այլ
եւս չը տեսնել նրա երեսը, միւս կողմից էլ,
իր «աղալին գործի» եւ «քաղաքականութեան»
անուան տակ թագնված նոր ձեւի մեծապա-
տիւ մտաբերականների դիմակալներութիւնը...
անա մի նոր լուր հարկաւորում է տրեխի, տե-
նելով թէ եր աստիճան կուրսութեան են հաս-
նում կրքերը:

«Մշակը» իր ժամանակին յայտնել էր, թէ
Պարիզում պ. Թաւաթեանի եւ Ղաւաթեա-
նի ղեկավարութեամբ պիտի կազմվէր մի հայ-
կական ընկերութիւն, որի ծրագրերն էին մի-
աւելորդ է խօսել իսկ քանի որ այժմ այդ
համակրելի գաղափարը, չնորհիւ մի քանի
մարդկանց, իրականացում չը գտաւ: Մենք
բոլորովին միաջ չունենք խօսել վերոյիշեալ
ընկերութեան խանգարման՝ պատճառների եւ
ոչ էլ խանգարումից առաջացած վէճերի եւ
պատուի աստեանի մասին: Միջանկեալ կը յի-
շենք միայն, որ Պարիզի հայ գաղթականու-
թիւնը իր անունով կազմված ընկերութիւնը
մասնաւոր, ոչ իրանից ընտրված համարելով,
բողոքում է, պահանջելով հաստատ հիւժերի
վրա դնել «Բեր անունը» կողմ այդ հաստա-
տութիւնը եւ հետեցնել միջից մի քանի ան-
վտանգի մարդկանց:

Գ. պ. Ա. Չոպանեան եւ իսկէնդեր իրանց
անպատուած զգալով, պատուի աստեան են
պահանջում, խոստանալով նրա վերանորոն-
հաղանդել: Իրանց ցանկացած անձերից
կազմված պատուի աստեանը կայացրեց վերո-
շենք ուղում առել այստեղ, թէ մի կողմը ար-

դարացած է այդ վճռով: Աւելի հետաքրքրա-
կանը հետեւեալն է:

Անցաւ ամառը: Եւ ահա այժմ, երբ ան-
համբերութեամբ սպասվում էր նոյն ընկերու-
թեան կազմակերպումը նոր ոյժերով, յանկարծ
լուր է տարածվում, թէ պ. Չոպանեան ղեռ-
նաւորում է մի տեղ, որով կարող է «խորի-
տաւար» պահանջել էր պատուի վերականգնու-
մը, եթէ ոչ ամբողջ «ապերախտ ազդից», դո-
նէ մասնաւոր անհատներից: Պ. Ա. Չոպանեան,
ոգնւորված իր նոր գիւտով, հասարակական
խնդիրը անձնականի վերածելով եւ իր բար-
կութեանը յաղուրդ տալու գուարճութեամբ,
բողոքում է, առայժմ, պ. Քալիփաշեանից
Ֆրանսիական դատարանին, որ, ըստ իր,
յանդգնել էր ժողովրդի իրաւունքների պաշա-
պաններից՝ ներկայացուցիչներից մէկը լինել
եւ խանգարել իր հանգստութիւնը:

Աններկի քայլ...
Աններկի ենք կոչում, որովհետեւ մի մարդ,
որ ունի իր ձեռքի տակ սեփական թերթ, կա-
րող է, եւ նոյն իսկ պարտաւոր է, ճշմարտու-
թիւնը միշտ երեւան հանել, առանց անձնա-
կան գծում հաշիւների արդիւնք համարելու
Պարիզի հայ գաղթականութեան բողոքը:

Եւ ահա ինչ է դուրս գալիս Գործը պիտի
քննվի Ֆրանսիական դատարանում: Արդեօք պ.
Քալիփաշեան պատուի աստեանին իր ներկայա-
րած ապացոյցները պիտի տեղափոխէ, դեկ-
տեմբերի 8-ին, Ֆրանսիական դատարանը, ուր,
մեզ համար մի այսպիսի տագնապալից ժամա-
նակ, երբ ամբողջ Ֆրանսիական մամուլը նո-
րից պաշտպանում է թիւրքահայերի դատը,
պէտք է արձանագրվեն ազգի անունով կա-
տարված կատուութիւնները, արձագանք տալով
նոյն մամուլի մէջ, վատթիւններին, որոնք
անպատուներ են անհատին, իսկ ուր մնաց
ազգին: Մենք կը խնդրենք պ. Քալիփաշեանից
հասարակութեան պատիւը այս անգամ էլ
յարգելով, լուծիւնը իր արդարութեան եւ
վեհանձնութեան ապացոյցը համարէ, թէկուր
դրանով անձնապէս իսկ տուժելու լինի:

Իսկ պ. Ա. Չոպանեան թող հաւատացած լի-
նի, որ Ֆրանսիական դատարանները չեն կա-
րող ազատել իրան հասարակութեան դատա-
տանից, որի արդար վճիռը յաւիտեան պէտք է
հնչէ իր ականջներին, թէեւ իր կամքին իսկ
հակառակ:

Տ. Հ. Բ.

ՄԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՆԸ

«Խաղաղասիրութիւնը, որ ցոյց տուեց Վալ-
դէկ-Բուսայի միջխորտութիւնը Ֆրանսիական
նաւատարմութիւնը թիւրքական ջրերն ուղարկելուց
յետոյ, ըստ երեւոյթին, բացառվում է նրա-
նով, որ միջխորտութիւնը շատ քիչ համա-
կրութիւն գտաւ աղքատականութեան մէջ: Այս
կողմից շատ հետաքրքրական է այն յօդուածը,
որ դուրս եկաւ «Matin» լրագրի մէջ, Միջխոր-
տական շրջանների հետ սերտ յարաբերութիւն-
ներ պահպանող այս լրագիրը յայտնում է, թէ
արշաւանքը Թիւրքիայի դէմ ժողովրդականու-
թիւն չէ վայելում Ֆրանսիայում եւ յատկա-
պէս նրա համար, որ Տիւրքիի եւ Լորանդոյի
գործը չէ կարող հայրենասիրական ոգնւորու-
թեան պիտի առիթ լինել: Առաջին անգամ
իշխուեց, առում է «Matin»-ը, որի աղետու-
թիւնն եւ հայրենասիրութիւնը միշտ բարձր է
գնահատվել պարթմէնում, տեսնում էր պատ-
գամաւորական ժողովը իր դէմ գնված: Ն-
րեւում է, որ ժողովրդին ձանձրացրել է այս
ամբողջ պատմութիւնը: Ֆրանսիայի պատիւ-
բարբոսին դուր է խառնվում այս գործին:
Այդ պատիւը շատ բարձր է կանգնած, եւ Ար-
դիւ-Համիդի կարողութիւնից վեր է գրպնել
նրան: Ուղիղ է եւ այն, որ որեւէ Լորանդոյի
համար չը պէտք է հանդէս բերել Ֆրանսիայի
պատիւը: Ֆրանսիայի պէտք է օրինակ եւ դա-
տալ աշխարհին: Յոյց տանք, որ մենք չենք
կառում օտակ համար, որ մեր ծովային զոր-
քերը չեն կատարում դատաստանական պրի-
տաւորների դեր: Յոյց տանք աշխարհին, ու
մենք այնքան ուժեղ ենք զգում մեզ, որ չենք
կամենում ոյժ գործ դնել նոյն իսկ նրանց դէմ,
որոնք արժանի են դրան: Եւ եթէ Թիւրքիա
տաւջարկէ մեզ վճռել մեր վէճը Հասալայի միջ-
նորդ դատարանում, դուրսիս բարձր ընտա-
ու մարդը խղճով պէտք է ընդունենք այդ
առաջարկութիւնը: Յիշատակելու արժանի է
եւ այն, որ առեւտուրի միջնորդ Միլիթանի
օրքան «Lanterne» լրագիրն եւս կարծիք է
յայտնում նաւատարմը սպառազինելու դէմ եր-
կու ինչ-որ կաւակածելի ֆինանսական գործիչ-
ների պատճառով:

«Ինչպէս հաղորդում են անգլիական լրա-
գիրները Կապի գաղթականութիւնից, սկսվում
է բռնկների զօրեղ գաղթականական հոսանք
հարաւ-արեւմտական երկու համարապետութիւն-
ներից դէպի գերմանական հարաւ-արեւմտեան
տիրապետութիւնները: Մօտ ժամանակներում
մի քանի հարիւր բռնական ընտանիքներ ան-
ցան Օրանական դեղը եւ ուղեւորվեցին դէպ

